

ԱՄԵՆԱՊԱՏԻՒՆՆԵՐԻ Ս. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊՍ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԱՅՅՐԸ ՀԱՅՖԱՅԻ ԵՒ ԵԱՖԱՅԻ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՆ

Հայֆայի եւ Եաֆայի գաղութները կարելոր դեր խաղացած են Պաղեստինի Հայ գաղութի մեջ:

Իրարմէ ոչ հեռու գտնուող Միջերկրականի ծովափնայ այս գոյգ քաղաքները կարելոր պատմական ամցեալ մը ունեցած են:

Պաղեստինի այս քաղաքներում մէջ Հայերը հաստատուած են 17-18րդ դարերում, Օսմանեան տիրապետութեան շրջանիմ: Բայց Հայկական աւելի հոծ գամգուածներ գաղթած են այս շրջանները 1915 թուականիմ, երիտասարդ Թուրքերու կողմէ գործադրուած ցեղասպանութեան ետք, ապաստան գտնելով Հայֆայի, Աքքէյի, Աթլիթի, Եաֆայի, եւ հիւսիսայիմ Պաղեստինի այլ քաղաքներում մէջ:

Հայֆա եւ Եաֆա, այս գոյգ քաղաքները հարիրամեակներէ ի վեր կապուած եղած են երուսաղէմի Ս. Աթոռիմ: Ամոմք եղած են ազգայիմ կեդրոններ եւ իրենց մպաստը բերած Հայ դաստիարակչական, միութեանական եւ մշակութայիմ կեանքիմ:

Սրբազան Պատրիարք Հօր այցելութիւնը Հայֆա տեղի ունեցաւ 23, 24, եւ 25 Նոյեմբերիմ: Հայֆայի Հայ համայնքը արդէմ տեղեակ էր Սրբազան Հօր այս պաշտօնական այցիմ մասիմ եւ պէտք եղած պատրաստութիւնները տեսած էր:

Ուրբաթ, 23 Նոյեմբերի երեկոյեան ժամը 7իմ Սրբազան Պատրիարքիմ ի պատիւ հի - րասիրութիւնը տեղի ունեցաւ Հայֆայի Հ.Մ.Ը.Մ.ի ակումբիմ մէջ:

Ներկայ էիմ Հոգեւոր Հովիւ Հոգշ. Ս. Ամուշաւան Ծ. Վրդ. Զղջանեանը, Գաւազամա - կիր Հոգշ. Ս. Համբարձում Վրդ. Քէշիշեանը, գաղութի երեւելի դէմքեր, իմչպէս մասն Հայֆայի, Նազարէթի եւ Աքքէյի կրօնական համայնքներու պետերը:

Հոգեւոր Հովիւր իր ուղերձը կարդաց եւ բարեմաղթութիւնները ըրաւ Պատրիարք Հօր եւ ըսաւ որ Ամեն. Ս. Թորգոմ Պատրիարքի գահակալութեան շրջամը պիտի ըլլայ կրօնա - կան, ազգայիմ եւ մշակութայիմ գարթօմքի շրջամ մը:

Բացմամ խօսքով համղէս եկաւ ակումբի ատենապետ՝ Տիար Երեմ Լափանեանը: Ամ բարի գալուստ մաղթեց Պատրիարք Հօր եւ ըսաւ որ Հայֆայի գաղութը ուրախ եւ խանդավառ է իր մոր Պատրիարքով, եւ աւելցուց « Զերդ Ամենապատուութեան հովանաւորութեան տակ պիտի աշխատիմք մեր գաղութիմ պայծառացմամ համար »:

Ապա խօսք առաւ Հայֆայի շրջանի Բամա գիւղի յայտնի մտաւորական, Հայֆայի Համալսարանի դասախօս՝ Օր. Ժորժէ Աւագեանը, որ իր հերթիմ Պատրիարք Հօր բարեմաղ - րութիւնները ըրաւ Եբրայերէն եւ Արաբերէն լեզուներով:

Պատանի երիտասարդ-երիտասարդուհիներ խանդավառութեամբ արտասանեցիմ եւ Հայերէն երգեր երգեցիմ:

Ապա Ամեն. Ս. Թորգոմ Պատրիարքը իր խոր գգացումները արտայայտեց եւ շնորհակա - լութիւնները յայտնեց գաղութի ղեկավարներում իրենց կազմակերպութեան համար:

Ամ ի միջի այլոց ըսաւ որ « հարկաւոր է մեր եկեղեցական եւ ազգայիմ արժէքները կենդանի պահել եւ մեր աշխատանքը կեդրոնացնել մեր մորահաս սերունդիմ վրայ, ամոմք ջամբելով մեր Հայեցի արժէքներում հպարտութիւնը »:

Ծաբաթ, 24 Նոյեմբերիմ, Ս. Պատրիարք Հայրը իր ամդրանիկ Պատարագը մատուց Ս. Եղիա մատարամ մէջ: Հաւատացեալ ժողովուրդի հոծ բազմութիւն մը լեցուցած էր մատուռը:

Ս. Պատարագիմ մասնակցութիւնը բերաւ Հայֆայի երկսեռ երգչախումբը: Բարոզի ըմթացքիմ, Ս. Պատրիարք Հայրը մէջբերումներ ըրաւ Հիմ Կտակարանէն եւ խօսեցաւ Եղիա Մարգարէի մասիմ եւ ըսաւ. « Թող Մարգարէի հաւատը եւ հաստատակամու - թիւնը մեզ առաջնորդէ մեր կեանքիմ մէջ »:

Ս. Պատարագի աւարտիմ, Թայպէ գիւղիմ մէջ, գաղութիմ կողմէ Պատրիարք Հօր ի պատիւ ճաշկերոյթ տրուեցաւ:

Հայֆայի գաղութը հիմնադրուած է 1880-ական թուականներում: 1927 թուականիմ

գաղութը հիմնած է իր եկեղեցին:

Այժմ Հայֆայի մէջ 400 Հայեր կը բնակին (70 ընտանիք): Հայֆայի յարակից շրջաններն են Նազարէթը, Աքքէն, Ռամա գիւղը, ուր կ'ապրին 25 Հայ ընտանիքներ:

Հայֆայի մէջ կը գործեն Հ.Մ.Ը.Մ. եւ Հ.Օ.Մ. միութիւնները: 1920-ական թուականներուն Հայկ. Բարեգործական Ընդհանուր Միութիւնը եւ Հայ Երիտասարդ Միութիւնը հաստատեցին իրենց մասնաճիւղերը Հայֆայի մէջ: Հոն է որ հիմնուած է Հ.Ե.Մ.ի առաջին ակումբը Պաղեստինի մէջ՝ 1929ի ամբամ:

Հայերէն լեզուի միօրեայ դասեր ալ կը տրուին Հոգեշնորհ Հովիւին եւ մուրեալ ուսուցիչներու կողմէ:

ԵԱՖԱՅԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Եաֆայի Հայ գաղութը կազմաւորուած է 1780-ական թուականներուն: Եաֆայի ծովե-գերքին վրայ Հայերը հիմնած են եկեղեցի մը՝ որ Ա. Նիկողայոս կը կոչուի:

1798 թուականին, Նափուիօն Պօմպաթթ իր եզիպտական արշաւանքի ժամանակ, Եաֆա ալ կ'այցելէ, եւ կ'ըսուի թէ իր զինուորներուն հետ Հայոց Վանքին մէջ իջեւանած է:

Եաֆայի մէջ կ'ապրին 60 Հայ ընտանիքներ (300 հոգի): Եաֆան որպէս մաւառ-գիստ քաղաք, իր հերթին կարեւոր դեր խաղցած է երկրի քաղաքական, տնտեսական, մշա-կութային եւ ազգային պատմութեան մէջ: Իսկ Հայերն ալ որպէս արհեստագործներ՝ իրենց մասնակցութիւնը բերած են քաղաքի ընկերային-տնտեսական կեանքին ու բարգաւաճման:

Եաֆայի մէջ կը գործեն Հ.Մ.Ը.Մ. եւ Հ.Օ.Մ. ակումբները: Հայկ. Բարեգործական Ընդհանուր Միութիւնն ալ ունեցած է իր գործօն պատմական շրջանը:

Հայֆա կատարած պաշտօնական այցելութենէն ետք, Երուսաղէմի Պատրիարքը այցելեց Եաֆայի Հայ գաղութին:

Ուրբաթ, 7 Դեկտեմբերին, Ա. Պատրիարք Հայրը Երուսաղէմէն այցելեց Եաֆա եւ ընդունուեցաւ գաղութի միօրեայ վարժարանի աշակերտութեան եւ համայնքի անդամներու կողմէ:

Ընդունելութիւնը տեղի ունեցաւ Եաֆայի Վանքին մէջ: Ներկայ էին Եաֆայի կրօնա-կան պետերը:

Բացման խօսքով հանդէս եկաւ Պր. Սարգիս Եագուպեանը, որ բարի գալուստ մաղթեց Սրբազան Հօր եւ արտայայտեց Եաֆայի Հայ համայնքի ուրախութիւնը այս բացառիկ առի-թով:

Ապա Հ.Օ.Մ.ի Տիկնամց Զանձնախումբի կողմէ խօսք առաւ Օր. Աղաւնի Գրիգորեան, ըսելով. « Բոլորին համար մենք ուրախութեամբ օր մըն է այս օրը: Պատրիարքի ներկա-յութիւնը մեր բոլորին կը խանդավառէ եւ մեզ աւելի եռանդով կը մղէ մեր ազգային-կրօնական եւ դաստիարակչական պարտականութիւններուն »:

Ապա, միօրեայ վարժարանի աշակերտները երգեցին եւ հայեցի շումշով արտասանեցին:

Օր. Արփիկ Ծօթիկեան սրինգի վրայ Հայկական երաժշտական կտորներ մուսկեց եւ ուրախացուց բոլորին:

Տեղւոյն Հոգեւոր Հովիւ՝ Հոգշ. Տ. Ամուշաւան Ծ. Վրդ. Զղջմանան իր ուղերձին մէջ շեշտեց որ Եաֆայի գաղութը Թորգոմ Պատրիարքի օրով մօր թափով եւ եռանդով պէտք է լծուի իր պատասխանատու գործերուն:

Ապա խօսք առաւ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը: Ան իր գոհունակութիւնը յայտնեց միօրեայ վարժարանի ուսուցիչներու եւ աշակերտներու ջանքերուն եւ նիգերուն, քաջա-լերեց ուսուցիչներու մուրիւմը եւ ժամանակի զոհողութիւնը, կատարելով իրենց պար-տականութիւնը հանդէպ ազգին, պատրաստելով եւ Հայեցիօրէն դաստիարակելով մեր մօր սերունդը:

Ան մաղթեց որ յառաջիկայ տարիներուն աւելի մենք աշխատանքներով արդիւնաւորուի Եաֆայի Հայ գաղութը եւ կերտէ իր փայլուն ապագան:

Շաբաթ, 8 Դեկտեմբերին, Եաֆայի Ա. Նիկողայոս մատրան մէջ տեղի ունեցաւ հանգի-սաւոր Պատարագ: Եաֆայի Հայ գաղութը հրմուած էր որ Երուսաղէմի Պատրիարքը պիտի պատարագէր Եաֆայի եկեղեցիին մէջ: Այդ օրը իրենց համար տօն էր ուրախութեամբ, ըլլալով մաւն տօնը եկեղեցւոյ պաշտպան Սուրբին, Որ մանչցուած է իբրեւ « պաշտպան մաւաւարաց »:

Պատրիարք Հայր Հայրեն և Անգլերեն լեզուներով քարոզեց 7 Պեկտ. 1988-ի
Հայաստանի ահաւոր երկրաշարժի ու ամոր հետեւանք դարձած ստեփրկեցւցիչ ու
սեւաշամնեում մասին, որոնց ամձնապէս ականատես եղած էր:

Նշուեց որ Հայրենիքի ժողովուրդը, մամուսով վիրավորներն ու երկրաշարժի վերապրողները, կարիք ունին Քրիստոնեական ճշմարիտ կրօնի ուսուցման, հագեցված սովորելու և Աւետարաններու: Այդ բոլորը ամռան հայրապետու համար Տիրաց օրհնութեան և մեր ժողովուրդին զոհողութեան ձգին՝ կ'ապստինին:

Համգիկսպօր Ս. Պատարագը վերջ գտաւ հոգեհամբդիստով մը՝ ք յիշատակ բռնադ ամնց՝ որոնց գոհուեցամ Հայաստանի երկրաշարժի աղէտին:

Մերազան Պատրիարքը Սուրբ Խորանին սպասարկող էրեք երիտասարդներուն « առաջը կընել » արտօմութիւն շնորհեց:

Ս. Պատարագևը ետք Սրբազան Պատրիարք Հայրը մաշի հիւրասիրուեցաւ հիմ եւաֆայի մաշարամները մեկում մէջ։ Հոմ մոյնպէս բարեմադրութիւններ եղամ առողջութեան, լազուութեան եւ արեւշատութեան։

Այսպիսով, Պատրիարք Հայրը իր պաշտօնական այցելութիւնը տուած եղաւ Հայֆայի եւ
Եւֆրատի զոյգ գաղութներում եւ աւելի շերտացուց ամենց մէջ սէրը հաճելի ազգիք եւ
Հայք. Առաքելական Սուրբ Եկեղեցիին:

Կրթիչը յիշելու որ հատրիխարդակամ այս պատարագմերը մախըմիաց մը չեն ունեցած գէթ վերջիմ տասնամեակներու տարեկորութեանց մէջ:

ԱՄԵՆԱՊԱՏԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀՅՐ ԱՌԱՋԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ ԲԵԹՂԵՀԷՄ

Նախապես եղած կարգադրության մը համաձայն, 30 նոյեմբեր 1990 Ուրբաթ, կէսօրուամ ժամը 12.30ին, Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը, Ս. Յակոբեանց միաբանութեան անդամներով ճամբայ ելաւ Մայրավանդէն եւ ուղղուեցաւ հարաւ՝ Ս. Ծննդեան քաղաքը, խալու համար Պատրիարքական առաջին պաշտօնական այցելութիւնը՝ Քրիստոնէական հմագոյն Տաճարին եւ երկրորդ մեծագոյն Սրբավայրին։

Ժամը 1ին, Նորին. Ամենապատուութիւնը իր շրջախմբով հաստատ. Ս. Ծմնդեան հրապարակը, ուր կը սպասէր դպրաց դասը, գլխաւորութեամբ Բեթղէնեմի վանուց Տեսչին, ինչպէս նաեւ Ս. Թարգմանչաց Վարժարանի աշակերտութեան, գլխաւորութեամբ իրենց Տեսչին: Հոն էին նաեւ Բեթղէնեմի քաղաքապետը, Զինուորական կառավարիչը եւ շրջանայ գիւղերու (Պէյք ճալա եւ Պէյք Սահուր) բաղապետները, ուր նաեւ Ս. Ծմնդեան վանուց Յովնաց եւ Լատինաց Տեսուչները, որոնք ողջագործուցեան Նորին Ամենապատուութեան հետ, երբ այս վերջինը կ'իջեմը ինքնաշարժէն, ու միացան թափօրին որ ուղղուեցաւ Ս. Ծմնդեան Տաճար՝ « Խորհուրդ Մեծ » շարականի երգեցողութեամբ, յար եւ նման Ս. Ծմնդեան թափօրական մուտքին:

Պատրիարք Սրբազան Հայրն ու Միաբանութիւնը երգելով անցան սիւնազարդ գաւիթէն: Մեր եկեղեցւոյ մուտքիմ, Ս. Պատրիարքը զգեցաւ շուքաւ, ի ձեռին ունենալով խաչ եւ զաւազան, եւ զոյգ բուրվառակիքներով եւ մոմակալներով իջան Ս. Ծմնդեան այրը, ուր կարդացուեցաւ Ս. Ծմնդեան Աւետարանը եւ երգուեցաւ « Փառք ի բարծումս » հրեշտակաւ: իմօ սոհմնդոյ մամկնացալ Աստուծոյ:

Արբազամ Պատրիարքը եւ թափօրականք կատարեցին մանէ իրեմց ուխտի երկրպագութիւնը
Ս. Արիմ եւ Մսուրիմ:

Թափօրականը ապա բարձրացան Տառնի Հայկական բաժինը, ուր նորին Ամենագատու-
թիւնը իր օրհնութիւնը տուաւ ներկաներուն, որմէ ետք « Խորհուրդ Մեծ »-ի Երզնցո-
ղութեամբ թափօրը ելաւ մեր վանուց Տեսչարանը, ուր խօսք առին Քաղաքապետ Էլիաս
Ֆրէյն եւ Հայ Համայնքի Մուխարը (Արաբերէնով), իրենց բարի գալուստի խօսքներում
մէջ մաղթանքներ ընելով Պատրիարք Սրբազան Հօր ներկար եւ արդիւնաշատ գահակալութեան:
Հունկ յետոյ, Սրբազանը խօսք առնելով, Ամգլերէնով, մաղթեց որ խաղաղութիւնը տիրա-
պետէ Ս, Երկրին մէջ, որ մամաւանդ վերջին տարիներու ընթացքին խռովաշփոթ վիճակէ մը
կ'անցնի, եւ շմորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց՝ որոնք փութացած էին զինք
զիմաւորելու: Ըմպելիով եւ ամուշեղէնով պատուաւարելէ ետք, օտար հիւրերը մեկնե-
ցան գոհունակ: